ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2017թվականի N 40-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի աղբահանության կազմակերպման հայեցակարգը հաստատելու մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան
2. Դիլիջանի Գետափնյա փողոց թիվ 19/1 հասցեի 2067.3 քմ հողամասի կառուցապատման իրավունքը այլ անձի փոխանցելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան
3. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցի օժանդակ շինությունները օրինականացնելու մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան
4. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող <<Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից>> 1000.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, ինչպես նաև հողամասերի կառուցապատման իրավունքի պայմանները, տարեկան վճարի մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
7. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ
9. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
10. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2017թվականի N 41-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 22.12.2009թ. թիվ 25-Ն հրամանը, «Թափոնների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները և ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի տարածքում աղբահանության կազմակերպման հայեցակարգը (կցվում է): Քննարկելով ներկայացված տարբերակը՝
Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

Հարցը տեղափոխել առաջիկա ավագանու նիստ՝ լրամշակված տարբերակով քննարկման:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
7. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ
9. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
10. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Հաստատված է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի
ավագանու----06-03---- 2017թ.
թիվ ----41-4---- որոշմամբ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

1. Սույն հայեցակարգը նպատակ ունի կարգավորել Դիլիջան համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության կազմակերպումը

2.1.Դիլիջան համայնքի վարչական տարածքում աղբահանությունը և սանիտարական մաքրումը իրականացնում է «Դիլիջան համայնքի սանիտարական մաքրում և լուսավորության» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:

2.2. Համայնքի իրավասությունը իր վարչական տարածքում աղբահանության կազմակերպման առումով ենթադրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն հայեցակարգի դրույթների համաձայն իրականացնել համայնքի բնակչության կողմից կենցաղային կարիքները հոգալու արդյունքում առաջացած և կազմակերպությունների ու առևտրի օբյեկտների արտադրած (իրենց կազմով, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկանիշներով բնակչության կողմից կենցաղային կարիքները հոգալու արդյունքում արտադրած թափոններից չտարբերվող) այն մնացորդները, որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկություններն ու տեղում չեն վերաօգտագործվում:

2.3. Աղբահանության ծառայություն մատուցողների դերում կարող են հանդես գալ մասնագիտացված կազմակերպությունները, այդ թվում՝ համայնքային բյուջետային հիմնարկը (ները), կամ համայնքի մասնակցությամբ ստեղծված առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունը (ները), կամ մասնավոր առևտրային կազմակերպությունները, կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ կազմակերպություններ), որոնք ունեն բավարար կարողություններ և միջոցներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մատուցելու աղբահանության ծառայություններ:

2.4. Համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպումն իրականացվում է հատուկ աղբատար և հարմարեցված (որոնք շահագործվում են սահմանված կարգով, աղբահանության կազմակերպման նպատակների համար) մեքենաների՝ աղբատար փոխադրամիջոցներով, որոնք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաստատված նորմերին: Աղբահանությունը համայնքում իրականացվում է համայնքի կողմից հաստատված աղբահանության ժամանակացույցի և սխեմային համապատասխան (հավելված 1)՝ սահմանված ներհամայնքային ճանապարհներով ու մայրուղիներով:

2.5. Աղբահանության կազմակերպմամբ զբաղվող կազմակերպությունները աղբը տեղափոխում են աղբավայր/աղբավայրեր, հատուկ հատկացված տեղեր, որոնք պետք է լինեն արտոնագրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և գտնվեն համայնքի հսկողության ներքո:

2.6. Աղբարկղերը, աղբամանները, աղբի հավաքման կոնտեյներները տեղադրվելու են համայնքի ղեկավարի թույլտվությամբ նախատեսված (հաստատված) վայրերում այնպես, որ աղբահանության կազմակերպմամբ զբաղվող անձինք հնարավորություն ունենան պատշաճ հավաքել և տեղափոխել աղբը: Համայնքի աղբահանության կազմակերպման քարտեզի համաձայն աղբարկղերը, աղբամանները սովորաբար տեղադրվում են նույն վայրում, սակայն այդ վայրերը չպետք է սահմանափակված լինեն միայն բնակելի շենքերի, ձեռնարկությունների, զբոսայգիների ու պուրակների, հասարակական վայրերի հարակից տարածքներով: Աղբարկղերի, աղբամանների տեղադրման վայրերը, ըստ անհրաժեշտության, սահմանում է համայնքի ղեկավարը՝ ելնելով աղբահանության կազմակերպման պատշաճ ապահովման նկատառումներից: Համայնքի ղեկավարը համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման ծառայություններ մատուցող անձանց հետ պայմանագրերի կնքման առաջարկներ անելիս (պայմանագրեր կնքելիս), իրավունք ունի առաջարկել աղբարկղերին, աղբամաններին ներկայացվող մի շարք պահանջներ, որոնք ներկայացվում են ստորև.

2.7. Աղբի, կրկնակի օգտագործման/վերամշակման ենթակա թափոնների կուտակման և հավաքման համար նախատեսված աղբանոթները/աղբարկղերը/աղբամանները պետք է.

. պատրաստված լինեն դիմացկուն մետաղից, ծանր պլաստիկից, սեղմված/խտացված մանրաթելային (ֆիբր) կոնստրուկցիայից կամ այլ նյութից՝ նշագծումով, թե ինչ տեսակի և որքան աղբ կարելի է լցնել աղբարկղի, աղբամանի, կոնտեյների մեջ, պահպանելով Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի պահանջները,

. ունենան համայնքի կողմից սահմանված հատուկ արտաքին տեսք՝ պատշաճ բեռնաթափման նպատակով,

. ունենան կլոր կամ ուղղանկյուն ձև՝ 0.4-ից մինչև 1.1 խոր.մետր տարողությամբ,բայց ընդհանուր քաշը աղբի հետ միասին,ոչ ավել քան 500կգ: (նկատի ունենալով,որ աղբատար մեքենայի մանիպուլյատորի բեռնաբարձման առավելագույնը 500կգ է):

. ունենան դրանց մեջ կուտակվող թափոններին համապատասխան ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններ՝ դրանց բացասական ներգործությունից մարդու առողջությունը ու շրջակա միջավայրը պահպանելու համար,

. ունենան համապատասխան գույն (մեկը մյուսից առանձնացող), որը հնարավորություն կտա աղբահանության ծառայությունից օգտվող անձանց՝ աղբը՝ ըստ տեսակների, հավաքելու համապատասխան արկղերի մեջ:

2.8. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա: Պուրակներում զբոսայգիներում աղբամանները տեղադրվում են մարդկանց զանգվածային կուտակման վայրերից ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա:

3. Աղբահանության կազմակերպման ռազմավարության հռչակումը և սկզբունքները

3.1. Աղբի հավաքման, հեռացման, տեղակայման, փոխադրման, պահման, աղբավայրերի շահագործման հսկողությունն իրականացնում է Դիլիջան համայնքի ղեկավարը՝ համայնքի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով, որը նպատակաուղղված է համայնքի բնակչության (հանրության) հանրային առողջության, անվտանգության և բարեկեցության պահպանմանը, թափոնների բացասական ներգործությունից շրջակա միջավայրի պահպանությանը, նյութահումքային և էներգետիկ ռեսուրսների բանական օգտագործման ապահովմանը, թափոնների գործածության վերաբերյալ հասարակության էկոլոգիական, տնտեսական և սոցիալական շահերի զուգակցմանը, ինչպես նաև ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցության կազմակերպմանը:

3.2. Համայնքի ղեկավարությունը աղբահանության կազմակերպման ռազմավարության հետագա պլաններում նախատեսում է հետևողական և նպատակաուղղված աշխատանքներ տանել հանրության հետ՝ համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման աշխատանքների հետագա շարունակական գործընթացների, բնագավառը կարգավորող իրավական ակտերի, իր որդեգրած քաղաքականության միջոցով:

4. Աղբահանության ծառայություն ստացող և ծառայություն մատուցող Ֆիզիկական և իրավաբանական անձինք

4.1. Աղբի համար նախատեսված վայրերում անօգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ այլ վտանգավոր նյութեր կամ այլ վտանգավոր թափոններ (ինչպիսի սահմանում տրված է Հայաստանի Հանրապետության «Թափոնների մասին» 24.11.2004թ. օրենքում, ինչպես
նաև իրենց բնակարանում կամ բնակելի տանը օգտագործված այնպիսի իրեր, առարկաներ, նյութեր կամ այլ թափոններ տեղադրելու դեպքում, երբ համապատասխան բժշկական ծառայությունների կողմից հայտնաբերվել են վարակիչ հիվանդություններ կամ այլ համաճարակածին ինֆեկցիաներ), տեղադրող անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ մասնավորապես համայնքի բնակիչները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և հանրորեն ճանաչված և ընդունված սանիտարական և հակահամաճարակային կանոններին համապատասխան, պարտավորվում են մաքուր պահել քաղաքի ցանկացած հանրային տարածք՝ փողոցները, մայթերը, պուրակները, այլ հանրային տարածքները, ինչպես նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող տարածքները, առանց համապատասխան թույլտվությունների չայրել կուտակված աղբը (պլաստիկ նյութերը և առարկաները, այդ թվում՝ պոլիէթիլենե տոպրակները և շշերը, ներկանյութերը և յուղերը, ռետինե, կաշվե իրերը և նյութերը, այլ վտանգավոր թափոնները), որպեսզի դրանք պատճառ չհանդիսանան հանրային տարածքներում աղբի՝ չնախատեսված վայրերում թափման, կուտակման և պահման համար:

4.3. Ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավունք ունեն և ցանկալի է, որ բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկեն տեղեկացնելու համայնքի համապատասխան ծառայությանը, թե քանի աղբաման, աղբարկղ կամ կոնտեյներ է պետք տվյալ հասցեի տարածքի աղբահանությունը պատշաճ կազմակերպելու համար:

4.4. Համայնքի վարչական տարածքում աղբահանությունն իրականացվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ աղբահանության ծառայություն մատուցող կազմակերպությունների կնքած պայմանագրերի համաձայն, որոնք չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերին:

4.5. Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են աղբահանող կազմակերպությանը կամ համայնքին ծանուցել աղբի հեռացման միանգամյա ծառայություն մատուցելու անհրաժեշտության մասին, որը կհամարվի առանձին ծառայություն և որի համար կկնքվի առանձին պայմանագիր: Տվյալ դեպքում աղբը կարող է տեղափոխվել անհատական բնակելի տների կամ ոչ բնակելի տարածքների բակային հատվածներից, եթե այդպիսի հնարավորություն ընձեռվում է աղբահանող մեքենայի մուտքի և ելքի համար:

5. Աղբահանության կազմակերպմանը ներկայացվող հիմնական պահանջները, որոնց մասին համայնքը պարտավորվում է իրազեկել հանրությանը

5.1. Դիլիջան համայնքի ղեկավարի աղբահանության կազմակերպման և վերահսկողության ֆունկցիան հետևյալն է՝

. համայնքն արտոնագրում, վերահսկում կամ լուծարում է աղբավայրերը
. սահմանում է աղբահանության կազմակերպման, սանիտարական մաքրման սխեմաները
. որոշում է աղբահանության կազմակերպման քաղաքականությունը,
. սահմանում է ծառայության մատուցման նվազագույն և առավելագույն վճարներ
. որոշում է համայնքի աղբահավաքման քարտեզը և տեղափոխման ուղղությունները
. որոշում է աղբարկղերի, աղբամանների տեղադրման վայրերը՝ պահպանելով չափսերը, կշիռը, գույնը և դրանց ներկայացվող այլ պահանջները
. սահմանում է աղբահանող կազմակերպությունների ծառայությունների գնման մրցույթի ընդհանուր պահանջներ, որոնք մասնավորապես վերաբերում են աղբի տեղափոխման պարբերականությանը, ըստ տեսակների հավաքմանը, ծառայությունների մատուցման գնին, որակին և այլն
. իրականացնում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի պահանջներից բխող վարչական ակտերի ընդունման և վարչական պատասխանատվության ենթարկելու գործառույթներ
. զբաղվում է շրջակա միջավայրի պահպանության, հանրության առողջության և անվտանգության ապահովման ուղղությամբ բնակչության իրազեկման բարձրացման խնդիրներով՝ պարբերաբար հանրությանը տեղեկացնելով Հայաստանի Հանրապետությունում սույն բնագավառը կարգավորող իրավական ակտերի մասին
. հետևողականորեն, օրենքով թույլատրելի բոլոր հնարավոր միջոցներով, իրականացնում է հանրության բնապահպանական գիտելիքների բարձրացման,

համայնքի կողմից ընդունվող ռազմավարական պլաններին ու որոշումներին, բնակչության ակտիվ մասնակցության աշխատանքներ:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն հայեցակարգը կարող է փոփոխվել, լրացվել, խմբագրվել միայն Դիլիջան համայնքի ավագանու որոշմամբ՝ ըստ անհրաժեշտության: Հայեցակարգը ենթակա է պարտադիր վերանայման այն դեպքերում, երբ ընդունվել են սույն բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության այլ իրավասու մարմինների ընդունած իրավական ակտեր կամ բնագավառը կարգավորող ազգային պետական հայեցակարգ:

6.2. Համայնքի ղեկավարն իր պարտքն է համարում նախազգուշացնել համայնքի վարչական տարածքում աղբահանության ծառայություն մատուցող և ստացող անձանց, որ.
Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ»օրենսգրքի 43.1-րդ հոդվածի համաձայն.

«Աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Չսահմանված և (կամ) չնախատեսված տեղերում ու վայրերում աղբամուղերից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից, աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված և (կամ) նախատեսված աղբավայրերից դուրս աղբ թափելը առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ քառասնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում՝
առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Առանց աղբահանության պայմանագրի աղբը հեռացնելը (թափելը) կամ պայմանագրով սահմանված վայրից (տեղից) դուրս աղբը հեռացնելը (թափելը)

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ քառասնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի հինգերորդ մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում՝
առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով»:
Հայաստանի Հանրապետության գործող վարչական օրենսդրության համաձայն վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

Ոչ ոք չի կարող վարչական իրավախախտման համար ներգործության միջոցի ենթարկվել այլ կերպ, քան օրենսդրությամբ սահմանված հիմունքներով ու կարգով

Դիլիջան համայնքի ղեկավար՝ Ա.Սանթրոսյան

ՀԱՎԵԼՎԱԾ1

Հաստատված է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի
ավագանու----06.03.---------- 2017թ.
թիվ ----41-Ա---- որոշմամբ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ՍԽԵՄԱ

1.Աղբահանության և սանիտարական մաքրման ժամանակացույց

1.1. Սպառման թափոնների հեռացում՝ առնվազն 3 օրը մեկ անգամ, իսկ +5C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ամեն օր:

1.2. Սանիտարական մաքրման աշխատանքները իրականացվում են՝ երկուշաբթի-շաբաթ (հանգստյան օր՝ կիրակի):

2. Աղբահանության սխեման

2.1. Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայր – աղբավայր:

2.2. Դիլիջան համայնքի Գոշ բնակավայր – աղբավայր:

2.3. Դիլիջան համայնք՝

2.3.1. Գայի փ.-Շահումյան փ.-Մյասնիկյան փ.-Կալինինի փ.-աղբավայր

2.3.2. Սայաթ Նովա փ.-Շահումյան 2-րդ նրբ.-Գետափնյա փ.-Կալինինի փ. -աղբավայր

2.3.3. Կամո փ.-Թբիլիսյան խճ.-Կալինինի փ.- աղբավայր

2.3.4. Հակոբջանյան փ.- Օրջոնիկիձե փ.-Կամարինի փ.-աղբավայր

2.3.5. Անդրանիկի փ.-Շանախյան փ.- Այգեստան փ.-Մոլդովական փ. -աղբավայր

2.3.6.Հովսեփյան փ.- Առաջին փ.-Ուսանողական փ.- Է. Ծատուրյան փ.-աղբավայր

2.3.7. Կալինինի 4-րդ նրբ.-Բարեկամության փ.- Աբովյան փ.- աղբավայր

2.4. Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայր- աղբավայր

2.5. Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայր- աղբավայր

2.6. Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայր- աղբավայր

2.7. Դիլիջան համայնքի Հովք բնակավայր- աղբավայր

3. Աղբահանության ծավալները

3.1. Դիլիջան համայնքի հավաքվող աղբի ծավալը մոտ 38 մ.խ. օրական

4. Սանիտարական մաքրման սխեմա

4.1. Շահունյան փողոց-11000մ.ք

4.2.Մյասնիկյան փողոց-37400մ.ք

4.3.Գետափնյա փողոց-19200մ.ք

4.4.Ուսանողական փողոց-9400մ.ք

4.5.Սայաթ-Նովա փողոց(սկզբնահատված) -7800m.q

4.6.Մյասնիկյան փողոցի մշակույթի պալատի շրջակայք-200մ.ք

4.7.2-րդ հիմնական դպրոցի շրջակայք-200մ.ք

4.8.Կալինինի փողոցից «Դիլիջան» առողջարանային համալիր տանող կամրջի շրջակայք-700մ.ք

4.9 Դիլիւան քաղաքի աստիճաններ-7200մ.ք

5.Սանիտարական մաքրման ծավալները

5.1.Սանիտարական մաքրման ծավալը կազմում է մոտ 4,5մ.խ

Դիլիջան համայնքի ղեկավար Ա.Սանթրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2017թվականի N 42-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 19/1 ՀԱՍՑԵԻ 2067.3 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՅԼ ԱՆՁԻ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 19/1 հասցեի 2067.3քմ հողամասի կառուցապատման իրավունքը մրցութային կարգով ձեռք է բերել <<Մ. ԸՆԴ Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ մանկական սրճարան կառուցելու նպատակով: Ընկերությունը դիմել է համայնքի ղեկավարին՝ կառուցապատման իրավունքը այլ անձի փոխանցելու թույլտվություն ստանալու խնդրանքով:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 19/1 հասցեի 2067.3քմ հողամասի նկատմամբ <<Մ. ԸՆԴ Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառուցապատման իրավունքը այլ անձի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանցելու հարցում: Այդ նպատակով, թույլատրել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել համապատասխան փոփոխություններ, Դիլիջանի համայնքի ղեկավարի հետ 26.01.2015թ-ին կնքված թիվ 70 պայմանագրով սահմանված, նշված հողամասի կառուցապատման իրավունքը այլ անձի փոխանցելու արգելանքը հանելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
7. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ
9. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
10. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2017թվականի N 43-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂԱՐԾԻՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենը՝ դպրոցի սեփականության վկայականում, որպես ինքնակամ հաշվառված, 274.17քմ ընդհանուր մակերեսով օժանդակ շինությունները անվճար օրինականացնելու խնդրանքով: Հարցը ներկայացվել է համայնքի ավագանու քննարկմանը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցի սեփականության վկայականում, որպես ինքնակամ հաշվառված, 274.17քմ ընդհանուր մակերեսով օժանդակ շինությունները անվճար օրինականացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
7. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ
9. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
10. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2017թվականի N 44-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ>> 1000.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ավագանու 2017թ. հունվարի 19-ի թիվ 15-Ա և 16-Ա որոշումներով հաստատվել է Աղավնավանք գյուղի 500.0քմ և Խաչարձան գյուղի 500.0քմ հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները՝ որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի:
Դիլիջանի համայնքի ղեկավարի 2017թ. մարտի 1-ի թիվ 86-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել նշված հողամասերը որպես համայնքի կապի ծառայությունների հեռանկարային զարգացման տարածքներ առանձնացնելու, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողերի կազմում ընդգրկելու և մրցույթի միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող <<էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից>> 1000.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդված սահմանված հողերի ցանկում ընդգրկելու, ինչպես նաև մրցույթի միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ
4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
7. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ
9. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
10. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Աղյուսակ.

Դիլիջանի համայնքի ավագանու

2017թ. մարտի --6--ի թիվ --44-Ա-- որոշման

Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ									
Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Հողամասի տրամադրման ժամկետը	Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին /ՀՀ դրամ/
1	Լոտ 1/ՔԿ-17/	գ.Աղավնավանք, 3-րդ փողոց, 4-րդ փկղ. թիվ 14	11-007-0104-0026	500.0	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հող	կապի	բջջային կապի կայանի կառուցման	մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը	300,000
2	Լոտ 2/ՔԿ-17/	գ.Խաչարձան, 1-ին փողոց, թիվ 5/1	11-036-0214-0088	500.0	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հող	կապի	բջջային կապի կայանի կառուցման	մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը	300,000

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Ա.Մարտիրոսյան*